# ՎԵՑ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԿ ՀԱՐՑԻ ԿԱՄ՝ Ի ՀԱԿԱԿՇԻՌ ՅՈԹ ՏԱՐԲԵՐԱԿԻ

Հուլիսի 20-ին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը, որը պիտի ուսումնասիրի ղարաբաղյան պրոբլեմը և առաջարկություններ մտցնի պետական իշխանության բարձրագույն մարմին: «Ամարասի» թղթակիցը հանձնաժողովի անդամներին խնդրեց պատասխանել մեկ հարցի՝

«Հանձնաժողովի եզրակացությունը կարող է ճակատագրական լինել մի ամբողջ ժողովրդի համար: Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք, հանձնաժողովը բարոյական իրավունք ունի որոշելու Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը, թե դա, այնուամենայնիվ, ժողովրդի բացառիկ իրավունքն է»:

Ահա թե ինչպիսի պատասխաններ ստացանք.

**ՎԼԱԴԻՄԻՐ ՖԱՏԵԵՎ**

Մենք չենք եկել պրոբլեմը լուծելու համար: Մենք եկել ենք ծանոթանալու գործերի վիճակին, որպեսզի ձեր օգնությամբ, այս հողի վրա ապրողների օգնությամբ հիմնավորապես ուսումնասիրենք հարցը և զեկուցենք Գերագույն խորհրդին: Մենք հարցը լուծելու իրավունք չունենք: Լուծելու իրավունք էն գլխից ժողովրդին է շնորհված: Հարցը պիտի ինքը՝ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լուծի: Իհարկե՝ Գերագույն խորհրդի կարծիքի հաշվառումով և նրա որոշման հիման վրա: Ես այդպես եմ հասկանում...

**ԲՈՐԻՍ ՕԼԵՅՆԻԿ**

Քանի որ մենք ապրում ենք բազմազգ երկրում, բնականաբար, չենք կարող անտարբեր մնալ այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում է այստեղ: Բոլորիս սիրտն է ցավում այս ամենի համար... Կարծում եմ, որ հանձնաժողովը բարոյական իրավունք ունի խորհրդակցել ժողովրդի հետ և զուգե փորձել միասին լուծել հարցը: Բայց, իհարկե, այս հարցում առաջնայինը ժողովրդի կարծիքն է:

**ՆԻԿՈԼԱՅ ՍԸՉԵՎ**

Դա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքն է, անշուշտ: Հանձնաժողովը պիտի ուսումնասիրի գործերի վիճակը, եզրակացությունների հանգի և զեկուցի Գերագույն խորհրդին: Ահա թե ինչի համար ենք մենք եկել: Այդ հարցը պիտի լուծվի ժողովրդի կարծիքի հաշվառումով և ի շահ ժողովրդի:

**ԿԼԱՐԱ ՀԱԼԼԻԿ**

Եթե խոսելու լինենք հարցի իրավական, առավել ևս՝ բարոյական կողմի մասին, ապա ես սկզբունքորեն գտնում եմ, որ միայն ժողովուրդն իրավունք ունի որոշելու իր ճակատագիրը: Բարոյական իրավունքը միշտ էլ, հասկանալի է, ժողովրդի կողմն է: Իսկ մեր առաքելությունը, ըստ իս, ժողովրդին օգնելն է այդ իրավունքը կենսագործելու համար, բայց այնպես, որպեսզի խուսափենք ավելի մեծ ողբերգություններից ու սխալներից: Հանձնաժողովը ավելի շատ միջնորդի դեր պիտի խաղա: Ցավոք, դա այն ինստանցիան չէ, որ ընդհանրապես ինչ-որ բան վճռելու իրավունք և հնարավորություն ունի...

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՈԿԱՆՈՎ**

Տվյալ դեպքում Լեռնային Ղարաբաղի հարցը վճռում է Գերագույն խորհուրդը: Մենք լոկ տեղում ուսումնասիրելու ենք իրավիճակը, լսելու բոլոր մարդկանց անխտիր և զեկուցելու ենք Գերագույն խորհրդին: Որոշումը Խորհուրդն է կայացնելու: Իսկ նա հարցը չի լուծի առանց ժողովրդի կարծիքը հաշվի առնելու:

**ԱԼԵՔՍԵՅ ԵՄԵԼՅԱՆՈՎ**

Քանի որ ձեր ժողովրդի կամքի իրականացումը այսպես թե այնպես կախված է կենտրոնական մարմիններից, ուստի Գերագույն խորհուրդը և իրավաբանական, և բարոյական իրավունք ունի լուծելու Լեռնային Ղարաբաղի հարցը: Իսկ մեր հանձնաժողովն էլ իր կարծիքը կհայտնի: Մեզ համար ամենակարևորը օբյեկտիվ լինելն է: Հարցի լուծման մենաշնորհը ժողովրդինն է այն առումով, որ ցանկացած հարցում առաջնայինը ժողովրդի, այլ ոչ թե «վերևների» կարծիքն է: Առաջնայինը ժողովրդի շահերն են, այլ ոչ թե, ինչպես ընդունված է, հասարակության և երկրի շահերը: Եվ իշխանությունները պարտավոր են հաշվի նստել ժողովրդի կարծիքի հետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ՝ ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: